

Մեր ժողովուրդին նկատմամբ գործադրուած ոճիրներու, սպանդներու, անարդարութիւններու տարեկանները իրարու կը յաջորդեն: Տարուան մեր ազգային ժամանակացոյցը լի է անոնցմով: Ապրիլի 24-ի սպանուող, երկրաշարժը, Մայիսի 27-ի երեւանի երկարուղիի կայարանի սպանութիւնները, Բաքուի, Կիրովաբադի ջարդերը, հարիւր-հազարաւոր աղբրէջանաբնակ հայերու զանգուածային բռնագաղթը, 1990 Յունուարեան ընդհարումները երասխաւանի շըրջանին մէջ եւ Արցախի հիւսիսը Շահումեան, եւ այլն: Ըարջը տեսարար կ'երկարի:

Այս բոլորին մէջ իր սաստկութեամբ, անակնկալ ըլլալու հանգամանքով եւ սարսափելի հետեւանքով առաջին տեղ կը գրաւէ Սումգաիթը:

Սումգաիթ. Ռ՛վ լսած էր այս անուանումը 1988 փետրուար 27-էն առաջ:

Հայաստանի մէջ՝ թերեւս շատեր, Արցախ՝ գուցէ բոլորը, քանի որ Սումգաիթի հայերուն մեծ մասը նախկին արցախցիներ էին:

Արտասահմանի մէջ՝ ո՛չ ոք:

Իսկ այսօր Սումգաիթը բոլորիս գիտակցութեան մէջ խարանուած է անջնջելիօրէն, ինչպէս Տէր-Չօրը, Մեծքենէն, Ռաս-իւ-Այնը, եւ կամ Սիբիրեան եւ Ալթայի հողմածեծ անձալրածիր տարածութիւնները:

Անցեալ սեպտեմբերի սկիզբը անգլերէն լեզուով հատոր մը հրատարակուեցաւ, "The Sumgait Tragedy" (Սումգաիթի Ողբերգութիւնը) խորագրով, խմբագրութեամբ Սամուէլ Շահմուրադեանի: Երեք հարիւրէ աւելի խիտ էջերու վրայ ամբողջ ողբերգութիւն մը կը տարածուի՝ ահաւոր, զեհնեալ, վաշտազ: Սպանդէն մագապուրծ եւ Հայաստան կամ Խորհրդային Միութեան զանազան շրջաններ հանդուանած հայեր իրենց տեսածները, զգացածները, մարմիններուն վրա գործադրուած հրէշտիւնները կը յուշեն՝ քացառիկ մանրամասնութեամբ, տեղի ունեցած վաշտագութիւններէն ոչինչ մոռցած, ոչինչ մտահան ըրած:

Ստացած օրս իսկ սկսայ կարդալ, որովհետեւ կ'ուզէի գրախօսել: Ես որ արագ կարդացող եմ, հիմա կանգ կ'առնէի իրաքանչիւր էջի, իրաքանչիւր պարբերութեան վրայ: Չէի կրնար շարունակել, սարսափը կը ցնցէր զիս, մարդկային հրէշտիւնը տագնապահար կ'ընէր, անկարելի կը դառնար ընթերցանութեան շարունակութիւնը: Երբեմն միակ պարբերութեան մը մէջ ամբողջ ընտանիքի մը վաշտագ սպանութեան նկարագրութիւնը կը կա-

տարուէր, ուրիշ էջի մը վրայ՝ երիտասարդուհիի մը գերմարդկային ճիզը՝ ընդդիմանալու, տեղի չտալու, պահպանելու իր մարմնին ու պատիւին անաղարտութիւնը: Ինքնապաշտպանութեան, հերոսութեան դրուագներու կողքին կային կացիներու հարուածներուն տակ դիտապաստ ինկողներու նկարագրութիւնները, սարսափահար փախուստները, աննկարագրելի չարչարանքներու, ծեծի, բռնութիւններու ենթարկուողներու պարագաները:



Սակայն զիս ամենէն աւելի կը սարսափեցնէր ոճրագործներուն զգացած հաճուածը բոլոր այս ոճիրներուն մէջ: Անոնք, գրեթէ բոլորն ալ երիտասարդ, ոմանք նոյնիսկ պատանի, մանչ եւ աղջիկ, բռնութեան ենթարկուած հայ տուներու մէջ դաշնամուր կը նուագէին, զիմի կը խմէին եւ գաւաթներն ու պնակները պատերուն զարնելով կը փշրէին խելագար մոլուցքի մէջ, մինչ չարչարանքներէն զգայագիր կամ մահամերձ հայ քնակիչները փոռած էին գետիներ, կամ սարսափով պահուրտած պահարանի մը մէջ:

Վալենտինա Շագայեանը կը պատմէ. «Այքս քացի եւ տեսայ որ կը ստիպէին Եւրիս որ իր հագուստները հանէ, երբ մերկացած էր, անոնք հեղուկ մը թափեցին անոր մարմնին վրայ եւ զինք աչքեցին: Ան գետին ինկաւ, փորձեց ազատիլ, գետինն վրա գալարուեցաւ, ցաւէն գոռաց սարսափելի ձայնով մը, եւ ողջ-ողջ այրեցաւ...»:

Այս մէջբերումը տակաւին ամեն մեղմ, նուազ սարսափելի նը-

կարագրութիւնն է գործադրուած ոճիրներուն:

Անցեալ տարի Եւրիս Ռոստը, խորհրդային հանրաժանօթ թղթակիցը, Սումգաիթի եւ Հայաստանի երկրաշարժին մասին հատոր մը հրատարակեց, "Armenian Tragedy" («Հայկական Ողբերգութիւն») խորագրով, ահաւասիկ նուազ մեղմ նկարագրական մը, զոր հեղինակը առած է Խորհրդային Միութեան դատախազութեան պաշտօնական տեղեկագրէն:

«Ան շրջապատուած էր տասնհինգ-քսան մարդոցմէ որոնք ըսկան զայն հարուածել կացիներով, դանակներով եւ երկաթ ձողերով: Անոնք հարուածները կ'ուղղէին գլխուն: Յետոյ անոնցմէ մին բռնկած վերմակ մը քաշեց եւ փաթեց մարդուն մարմնին շուրջ, զայն ամխացնելով»: «Անոնք մերկացուցին աղջիկը եւ զայն նետեցին մեծ աղբարկղի մը մէջ: Սարսափելի ճիշով մը, աղջիկը փորձեց դուրս գալ աղբարկղէն: Յետոյ երիտասարդ մը, քսան-քսաներկու տարեկան, առջեւ եկաւ՝ ձեռքին ծաղկակար թէյամանով: Քարիւղ կար թէյամանին մէջ: Ան քարիւղը թափեց աղջկան վրայ եւ իր իսկ ձեռքով բռնկեցուց անոր մարմինը»:

Եւ այնպէս, շարունակաբար: Ռ՛չ առաջին գիրքը, եւ ոչ ալ երկրորդը կրցած եմ կարդալ ամբողջութեամբ, քանի մը տասնեակ էջեր՝ հարիւրաւորներէն:

Երկու յատկանշական կետեր պէտք է նկատի ունենալ. Սումգաիթի ոճիրներուն պետականօրէն կազմակերպուած ըլլալը, եւ՝ ոճրագործներու անդատապարտ մնալը:

Բոլոր վերապրողներուն նկարագրութիւններէն, ինչպէս նաեւ ազերի խորհրդային իշխանութիւններու հետագօտութիւններէն ստուգուած են Բաքուի եւ Սումգաիթի կուսակցական եւ կառավարական մարմինների մեղսակցութիւնը: Եւ քացի մի քանի երիտասարդ ազերիներու խայտառակ դատաւարութեան Մոսկուայի եւ հետագային Բաքուի, Սումգաիթի մէջ, հարիւրաւոր ոճրագործները այսօր մէկական հերոսներ դարձած են, անդատապարտ եւ ազատ:

Գործադրուած ոճիրներուն եւ սարսափներուն մէջ ամենէն ահատը այս է. Խորհրդային պետութեան գործնական մեղսակցութիւնը՝ ոճրագործները չձերբակալելու, չդատելու, չդատապարտելու, արդար պատիժ չտալու: Եւ ինչ ալ եղած ըլլան «պետական» պատճառները, եւ ամէն անգամ որ հարցը հայկական իրաւունքներու

մասին է՝ այդ «պատճառները» երեւան կուգան, այսօր Նախագահ Գորպաչով եւ իր գլխաւորած կառավարութիւնը յանցաւոր են այնքան որքան նոյնինքն ոճրագործները, որովհետեւ պահել ոճիրը եւ զայն գործադրողները նոյնքան ծանր ու դատապարտելի յանցանք է, որքան գործնականօրէն զայն գործադրելը:

Աւելին, անդատապարտ ոճիրը ծնունդ կուտայ նոր եւ ծանրագոյն ոճրագործութիւններու:

Այսպէս, օրինակ, Հայկական ձեղասպանութեան անդատապարտ մնալը վստահութիւն ներշնչեց Հիտլերին՝ ազատօրէն, պատիժի քարոյական կաշկանդումներէն զեռն ձեռնարկելու միլիոնաւոր լեհներու, ռուսերու, հրեաներու, ուքրաինացիներու եւ ուրիշներու ոչընչացման: Նոյնպէս, որովհետեւ Ստալինի եւ Բերիայի ոճրագործութիւնները՝ երեսուն տարիներու վրայ տարածուող, անդատապարտ մնացել էին Խրուշչովի իշխանութեան կողմէ, Բրեժնեւ եւ չաջորդները շարունակեցին միլիոնաւոր խորհրդային քաղաքացիներու ապօրէն քանտարկութիւնները, աքսորները, պարտադիր աշխատանքները Սիբիրիոյ տափաստաններուն մէջ, ու սպանութիւնները:

Եւ, հետեւաբար, Սումգաիթին յաջորդեցին խորհրդային ասիական հանրապետութիւններու մէջ ազգամիջեան ընդհարումներն ու սպանութիւնները, Բաքուի ջարդը, Խոջալուն, Կիրովաբադը, եւ այլն:

Բարոյական խարխիս չունեցող կառավարութիւն մը չի՝ կրնար գործնական, վարչական քաղաքականութիւն վարել, նոյնիսկ եթէ կայսրութիւն մը կը ներկայացնէ: Եւ եթէ այդ կառավարութեան գլուխը՝ նախագահ Գորպաչով, Նոքելեան խաղաղութեան մրցանակի կ'արժանանայ, կը նշանակէ թէ քարոյական կեանքի, արդարութեան հասկացողութեան, մարդկային արժեքափելու ըմբռնումի քացարձակ քացակայութիւն մը կը տիրէ ամենուրեք, եւ հետեւաբար կրնան պատահիլ Սումգաիթներ կամ Զուարթնոցներ, Թիֆլիսի ապրիլեան եղեռներ եւ Լիտուանիաներ: Պատահիլ եւ կրկնուիլ անվերջ:

Սումգաիթի երրորդ տարեկիցին առիթով, պէտք է մտածենք թէ Հայաստան եւ հայրենաբնակ ու արցախաբնակ ժողովուրդ ինչպէ՞ս կրնան ապրիլ ու գոյատեւել ապարարոյական կայսերական շըրջապատի մը մէջ, Հայաստան ոճրագործողներու ստուէրին տակ: